



"Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500 մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժում" աշխատանքային նախագծի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Փետրվար, 2020թ.

Պատվիրատու՝ "Ջրմուղկոյուղի" ՓԲԸ

**Մշակող՝
"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ**



ATMS Solutions

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ
Հայաստան, Երևան, 0010
Հանրապետության Հրապարակ
Վ. Սարգսյան 26/3, գրասենյակ 713 Յեռ.
+37410 583643, Բջջ. +37499 109495
info@atms.am, www.atms.am



"Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500 մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժում"

աշխատանքային նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500 մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժում"

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ տնօրեն _____ Ա. Տեր-Թորոսյան

" ____ " _____ 2020թ.

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ

Հայաստան, Երևան, 0010
Հանրապետության Հրապարակ
Վ. Սարգսյան 26/3, 7-րդ հարկ
Գրասենյակ 713
Հեռ.՝ +37410 583643
Բջջ.՝ +37499 109495
info@atms.am
www.atms.am



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 4
- 2. ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ 4
- 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ..... 5
- 4. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ..... 5
- 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 9
 - 5.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը..... 10
 - 5.2 Նախատեսվող գործունեության հիմնական փուլերը և հաջորդականությունը 10
 - 5.3 Աշխատանքների իրականացման ժամանակացույցը 10
 - 5.4 Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման տեխնիկական բնութագրերը 11
 - 5.5 Ջրային ռեսուրսների պահանջի և կեղտաջրերի հաշվարկ 12
 - 5.6 Թափոնների կառավարում..... 13
- 6. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 13
 - 6.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը, ռելիեֆը և լանդշաֆտը 13
 - 6.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի երկրաբանությունը 14
 - 6.3 Հիդրոերկրաբանություն..... 15
 - 6.4 Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ 15
 - 6.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը 16
 - 6.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները 17
 - 6.6.1 Ձերմաստիճանը 17
 - 6.6.2 Խոնավությունը 17
 - 6.6.3 Մթնոլորտային տեղումները 18
 - 6.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը 18
 - 6.8 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը 22
 - 6.9 Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները 26
 - 6.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջանների համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը..... 27
 - 6.11 Պատմամշակութային և բնության հուշարձանները 28
- 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 31
 - Հավելվածների մաս..... 33



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1	Պատվիրատու՝	"Ջրմուղկոյուղի" ՓԲԸ
1.2	Ձեռնարկող՝	"Ջրմուղկոյուղի" ՓԲԸ
	Փաստացի գործունեության հասցեն և հեռախոսահամարը՝	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա +37410 548917
1.3	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածք (Նկար 1)
1.4	Հիմնական գործունեության տեսակը՝	Ջրամատակարարում
1.5	Աշխատանքային նախագծի մշակող՝	"Ղազարյան Շին" ՍՊԸ
	Աշխատանքային նախագծի մշակողի հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 6, բն. 35 +37498 170888
1.6	Նախնական գնահատման հայտի մշակող՝	"ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ
	Աշխատանքային նախագծի մշակողի հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3, գրասենյակ 713, +37410 583643

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՍՊԸ՝	Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՊՈԱԿ՝	Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն



3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Իրականացվող գործունեության նպատակն է ապամոնտաժել ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներով անցնող 400-500 մմ տրամագծով պողպատե խողովակաշարերը՝ ի կատարումն ՀՀ վարչապետի 2019 թվականի ապրիլի 15-ի թիվ 02/12.4/17623 հանձնարարականի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության "Սևան ազգային պարկ" ՊՈԱԿ-ի տնօրենի 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 25-1006 գրության (Հավելված 1), այն է. "Սևան" ազգային պարկի 1905 մ բացարձակ նիշից ցածր տարածքներում գտնվող շենք-շինությունները և ենթակառուցվածքները (ջրագծերը և այլն) անհրաժեշտ է սեղմ ժամկետներում ապամոնտաժել և տեղափոխել:

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, ջրային տնտեսության բնագավառում՝ 300 մմ և ավելի տրամագծով և 1 կմ և ավելի երկարությամբ ջրամատակարարման համակարգերին կամ մայր ջրանցքներին ամնչվող նախատեսվող գործունեությունները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրույթային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:



"Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500 մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժում"

աշխատանքային նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ելթակա հիմնադրույթային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրույթային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուծումները կամ քննարկումները ամսվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական,



"Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500 մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժում"

աշխատանքային նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

ռեկրեացիոն արժեք ներկայացնող Էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1994 թ.) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սահմանային նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին" թիվ 192 և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաժ գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերը և դրանց հետ գործածությանը վերաբերվող ընդհանուր դրույթները:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) և **"Կենդանական աշխարհի մասին"** (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա



մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնականպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես Էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" թիվ 71-Ն և **"ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին"** թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

"ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

"Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

"Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1404-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

"Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 80-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Արարատի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

"Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին" թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում

ՀՀ կառավարության 30.05.2002 թ.-ի **"Սևան" ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպելու և "Սևան" ազգային պարկ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին"** թիվ 927-Ն որոշման համաձայն, ռեկրեացիոն և տնտեսական գոտու վարձակալված տարածքներում քաղաքաշինական գործունեությունը թույլատրվում է իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում»:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքային նախագծի հիմքը՝ "Սևան ազգային պարկ" ՊՈԱԿ-ի տնօրենի 2019 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 25-1006 գրությունն է (Հավելված 1) ուղղված "Ջրմուղկոյուղի" ՓԲԸ-ին, համաձայն որի "Սևան" ազգային պարկի 1905 մ բացարձակ նիշից ցածր տարածքներում գտնվող շենք-շինությունները և ենթակառուցվածքները (ջրագծերը և այլն) անհրաժեշտ է սեղմ ժամկետներում ապամոնտաժել և տեղափոխել:

Նախագիծը մշակվել է "Ջրմուղկոյուղի" ՓԲԸ պատվերով՝ Լճաշեն և Ծովագյուղ համայնքների ղեկավարների կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների հիման վրա:

Ապամոնտաժման ենթակա են 400-500 մմ տրամագծով երկու պողպատե խողովակաշարեր՝ մեկը 10.5 կմ, մյուսը՝ 1.8 կմ երկարություններով: Նշված խողովակաշարերի ուղեգծերը ծանրաբեռնված չեն շինություններով և այլ իրավունքներով:

Նախատեսվող գործունեության արբանյակային քարտեզը՝ խողովակաշարերի ուղեգծերի նշագրմամբ, բերված է **Նկար 1**-ում, իսկ դրանց իրադրային հատակագծերը ներկայացված են **Հավելված 2**-ում և **Հավելված 3**-ում:



Նկար 1. Նախատեսվող գործունեության տեղակայման արբանյակային քարտեզը



5.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը

Ապամոնտաժման ենթակա պողպատե խողովակաշարերը գտնվում են Սևան ազգային պարկի տարածքում՝ Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական շրջաններում: Խողովակաշարերից մեկը՝ 10.5 մ երկարությամբ, անցնում է Ծովագյուղ համայնքի վարչական տարածքով (Հավելված 2), Մ-4 "Երևան-Սևան-Իջևան" և Մ-14 "Շորժա-Վարդենիս" ավտոճանապարհներին աջ կողմից հարող ուղեգծով: Երկրորդ խողովակաշարը՝ 1.8 մ երկարությամբ, անցնում է Լճաշեն համայնքի վարչական տարածքով (Հավելված 3), Մ-10 "Սևան-Մարտունի-Գետափ" ճանապարհի աջակողմյան հատվածով: Ապամոնտաժվող խողովակաշարերի հեռավորությունները ավտոճանապարհներից ներկայացված են իրադրային սխեմաների վրա (Հավելված 2 և Հավելված 3):

5.2 Նախատեսվող գործունեության հիմնական փուլերը և հաջորդականությունը

Աշխատանքային նախագծի համաձայն, նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել հետևյալ փուլերով և հաջորդականությամբ՝

1. Նախապատրաստական աշխատանքներ
2. Խրամուղիների մշակում՝ հողային աշխատանքներ
3. Խողովակաշարերի կտրում
4. Ապամոնտաժման, դուրս բերման և տեղափոխման աշխատանքներ
5. Կողալիցքի՝ հողային հանույթի և բերրի շերտի ետլիցքի աշխատանքներ
6. Ուղեգծի հարթեցման և բուսականության նախկին տեսքի վերականգնման աշխատանքներ:

5.3 Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

Նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակացույցը բերված է ստորև Աղյուսակ 1-ում, իսկ աշխատանքների կազմակերպման ֆունկցիոնալ սխեման բերված է Հավելված 4-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

№	Հիմնական փուլերը	Ժամանակացույցը ըստ ամիսների											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
I	Նախապատրաստական աշխատանքներ												
II	Խրամուղիների մշակում՝ հողային աշխատանքներ												
III	Խողովակաշարերի կտրում												
IV	Ապամոնտաժման, դուրս բերման և տեղափոխման աշխատանքներ												
VI	Կողալիցքի՝ հողային հանույթի և բերրի շերտի ետլիցքի աշխատանքներ												
VII	Ուղեգծի հարթեցման և բուսականության նախկին տեսքի վերականգնման աշխատանքներ												

5.4 Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման տեխնիկական բնութագրերը

Ապամոնտաժվող պողպատե խողովակաշարերը գտնվում են Սևան ազգային պարկի տարածքում՝ Լճաշեն և Ծովագյուղ համայնքների ափամերձ հատվածներում: Ծովագյուղ համայնքի վարչական տարածքում գտնվող խողովակաշարի երկարությունը 10.5 կմ է, իսկ Լճաշեն համայնքինը՝ 1.8 կմ:

Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման աշխատանքները ընթանալու են խողովակաշարերին համեմատաբար քիչ վնաս հասցնելով: Ապամոնտաժված պողպատե խողովակաշարերը բարձրվելու են բեռնատար մեքենաներ և տեղափոխվելու են "Սևան" ջրմուղ-կոյուղու պահեստ: Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման հետ մեկտեղ ապամոնտաժվելու են նաև խողովակների կցամասերը, ինչը անհրաժեշտ քայլ է արդյունաբերական և բեռնախցեկային ստորգետնյա խողովակաշարերի ապամոնտաժման գործընթացում: Մինչ ապամոնտաժման աշխատանքները խողովակաշարերը պետք է ազատել ջրամեկուսացումից և կոռոզիայի պաշտպանությունից, ապա իրականացնել համապատասխան կտրման գործընթաց:

Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման ժամանակ կիրառվող շինարարական կոնստրուկցիաները և աշխատանքների ծավալները բերված են ստորև [Աղյուսակ 2](#)-ում:

Աղյուսակ 2. Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման համար կիրառվող կոնստրուկցիաների անվանացանկը և քանակները

Ց/Ց	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Ընդհանուր ծախսը
Լճաշեն համայնքի հատված (1800 մ)			
1	Բուսահողի քանդում էքսկավատորով	մ ³	183.84
2	Բուսահողի քանդում ձեռքով	մ ³	20.57
3	Լիցքային գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով	մ ³	3886.3
4	Լիցքային գրունտի մշակում ձեռքով կողալիցքով	մ ³	2322
5	Ø (400-500) տրամագծի խողովակի կտրում	հատ	301
6	Ø (400-500) տրամագծի խողովակի դուրս բերում և բարձում ամբարձիչով	տ	146.1
7	Ø (400-500) տրամագծի խողովակի տեղափոխում	տ	146.1
8	Կողալիցքային գրունտի ետլիցք տոփանումով	մ ³	6208.3
9	Բուսահողի ետլիցք	մ ³	204.41
Ծովագյուղ համայնքի հատված (10500 մ)			
10	Բուսահողի քանդում էքսկավատորով	մ ³	1071.62
11	Բուսահողի քանդում ձեռքով	մ ³	120.05
12	Լիցքային գրունտի մշակում էքսկավատորով կողալիցքով	մ ³	22670.6
13	Լիցքային գրունտի մշակում ձեռքով կողալիցքով	մ ³	13545
14	Ø (400-500) տրամագծի խողովակի կտրում	հատ	1761
15	Ø (400-500) տրամագծի խողովակի դուրս բերում և բարձում ամբարձիչով	տ	852.8
16	Ø (400-500) տրամագծի խողովակի տեղափոխում	տ	852.8
17	Կողալիցքային գրունտի ետլիցք տոփանումով	մ ³	36215.6



Ք/Ք	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Ընդհանուր ծախսը
Լճաշեն համայնքի հատված (1800 մ)			
18	Բուսահողի ետլիցք	մ ³	1191.67

Ընդհանուր առմամբ պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման աշխատանքների իրականացման համար փորվելու է ընդհանուր առմամբ՝

- Լճաշեն համայնքի հատվածում - 6208.3 մ³ հող, որից բուսահող՝ 204.41 մ³,
- Ծովագյուղ համայնքի հատվածում - 36215.6 մ³ հող, որից բուսահող՝ 1191.67 մ³:

Փորված գրունտը, ինչպես նաև բուսահողը կողալցվելու է ապամոնտաժվող խողովակաշարերի հարավանությամբ՝ իրարից առանձին: Փորված գրունտը պահվելու է առավելագույնը 1-2 օր, որից հետո ամբողջությամբ օգտագործվելու է որպես ետլիցք: Պահման ընթացքում հանված գրունտը ծածկվելու է անջրաթափանց թաղանթով:

Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման ընթացքում նախատեսվում է կիրառել հետևյալ տեխնիկական միջոցները՝ խողովակամբարձիչ մեքենա, խողովակատար մեքենա, մինի էքսկավատոր, էքսկավատոր հակադարձ շերտփով, բուլդոզեր և բեռնատար մեքենա (**Հավելված 6**): Աշխատանքների իրականացման ընթացքում չին. մեքենաները կայանելու են ճանապարհի հարևանությամբ՝ հարակից տարածքում, չխոչընդոտելով երթևեկության բնականոն ընթացքին: Նախատեսվող գործունեության ընթացքում հիմնականում օգտագործվելու է բենզին և դիզելային վառելիք, որը կիրառվելու է որպես վառելանյութ՝ շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների համար: Շինարարական մեքենաների լիցքավորումը իրականացվելու է մոտակա լցակայաններում: Աշխատանքների կազմակերպման ֆունկցիոնալ սխեման, ինչպես նաև խրամուղում աշխատանքների իրականացման կարգը բերված է **Հավելված 5**-ում:

5.5 Ջրային ռեսուրսների պահանջի և կեղտաջրերի հաշվարկ

Ապամոնտաժման փուլում ջուրն օգտագործվելու է ապամոնտաժման ենթակա հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Ապամոնտաժման ենթակա հարթակների ջրցանը իրականացվելու ջրցան մեքենաներով: Աշխատողների սանիտարահիգիենիկ կարիքները հոգալու համար նախատեսվող գործունեության տարածքին մոտ կապալառուն վարձելու է սեփական տուն, որը կահավորված կլինի լոգարանով, զուգարանով և սննդի ընդունման սենյակով: Չուտ արդ. հրապարակներում կտեղադրվի նաև բիո-զուգարաններ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, չին.հարթակների ջրցանի համար ջրապահանջը կազմում է՝

$$H_6=4 \text{ մ}^3/\text{օր}:$$

Ինժեներատեխնիկական աշխատողների և բանվորների (այդ թվում վարորդների) խմելու և սանիտարահիգիենիկ կարիքների համար անհրաժեշտ ջրապահանջը կազմում է՝

$$W_{\text{ԳՏ}}=0.11 \text{ մ}^3/\text{օր}:$$



Այսպիսով, նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ ընդհանուր ջրօգտագործումը կկազմի՝ $4+0.11=4.11$ մ³/օր:

5.6 Թափոնների կառավարում

Պողպատե խողովակաշարերի ապամոնտաժման աշխատանքների արդյունքում առաջանալու է մոտ 100 կգ մետաղի ջարդոն, որը շինարարական աշխատանքների ընթացքում կտեղափոխվի "Ջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի Սևանի պահեստ՝ հետագայում մասնագիտացված կազմակերպություններին վաճառելու նպատակով:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

6.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը, ռելիեֆը և լանդշաֆտը

Սևանա լճի կենտրոնական գոտու ավազանը ունի ոչ միայն բարդ գեոմորֆոլոգիական կառուցվածք, այլ նաև բարդ հետերոգեն տեկտոնական կառուցվածք: Սևանի ավազանի ամենահին առաջացումներն են համարվում բյուրեղային թերթաքարերը, որոնք երկրի մակերևույթին մերկանում են Սևանի ավազանից դուրս: Կրաքարերի, կվարցիտների և կավային թերթաքարերի ելքեր են հայտնաբերված Գեղամա լեռնաշղթայի հարավային ծայրամասերում՝ Արգիչի գետի վերին հոսանքներում:


Փոքր Սևանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Գեղամա լեռների արևմտյան լանջերն աստիճանական թեքվածությամբ դեպի արևմուտք՝ իջնում են մինչև Չկալովկա-Նորաշեն գյուղերի ափամերձ տարածքները՝ շուրջ 1950 մ բարձրության նիշերով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը: Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ափսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

Կենտրոնական գոտու լանդշաֆտները առաջացել են Սևանա լճի ջրի մակարդակի իջեցման արդյունքում: Մինչև իջեցումը լճի մակարդակը 1916.0 մ էր: 2010թ. հունվար ամսվա դրությամբ լճի մակարդակը գրանցվել է 1899.23 մ՝ 16.77 մետրով ցածր սկզբնական նիշից: Ներկայիս կենտրոնական գոտու լանդշաֆտները ձևավորվել են բացված հատակային գրունտների և դրանց վրա անտառաշերտերի ստեղծման արդյունքում, որոնց ցամաքային տարածք լինելն այսօր չի գերազանցում 60 տարին: Այսպիսով կենտրոնական գոտու լանդշաֆտների Էկոլոգիական համակարգերը չեն կարող պարունակել առաջնային բնական, Էնդեմիկ կենսատեսակներ: Նշված լանդշաֆտները՝ մարդկային գործունեության ազդեցության ներքո բնական պայմանների փոփոխության և միջամտության արդյունք են: Դրա հետ մեկտեղ, կենտրոնական գոտու լանդշաֆտները այն տարածքներն են, որոնց կազմում է գտնվում ջրային ափամերձ և ցամաքային ջրամերձ գոտիների Էկոհամակարգերի անմիջական փոխազդեցության անցումային շերտը:

6.2 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի երկրաբանությունը

Նախատեսվող գործունեության տարածքներից մեկը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքում, փոքր Սևանի հարավ-արևմտյան մասում: Սևանի ավազանի կենտրոնական գոտու այս տարածքը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջին, որի բարձրությունը 140 մ է, իսկ ամենաբարձր կետը Աժդահակ գագաթն է՝ 3597 մ (Նկար 2): Գեղամա լեռնաշղթայի լանջը աստիճանական թեքվելով դեպի արևմուտք՝ իջնում են մինչև Չկալովկա-Նորաշեն գյուղերի ափամերձ տարածքները՝ շուրջ 1950 մ բարձրության նիշերով: Հրաբխային լավաների հոսքահետքերը, հասնելով մինչև լճի ափամերձ տարածքները՝ առաջացրել են արևմտյան ափի բազմաթիվ ծովախորշեր, հրվանդաններ, երբեմն հզոր քարաբեկորների ձևով՝ ընդհուպ մինչև լիճը:

Նախատեսվող գործունեության մյուս տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքում, փոքր Սևանի հյուսիս-արևմտյան մասում: Սևանի ավազանի կենտրոնական գոտու այս տարածքը գտնվում է Փամբակի և Արեգունի լեռնաշղթաների հրաբխային սարահարթերի միջև: Տարածաշրջամը ներկայացված է հզոր հրաբխանստվածքային ապարներով: Մեծ տարածում ունեն տուֆոկոնգլոմերատները, տուֆոբրեկչիաները, պորֆիրիտները և դրանք հատող ինտրուզիաները: Բարձրադիր լանջերը և ջրբաժանները ներկայացված են մերգելներով և կրաքարերով, որոնք աններդաշնակ կերպով տարածված են հրաբխա-նստվածքային կոմպլեքսի վրա: Փամբակի լեռնաշղթայի արևելյան վերջավորությունը նույնպես կազմված է պորֆիրիտներից և տուֆոգեններից, որոնք Սևան քաղաքի շրջանում ծածկված են Նորագույն լավային ծածկոցներով: Ստորև Նկար 2-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրերի դիրքը ՀՀ լեռնային համակարգում:



Պայմանական նշաններ

- 11 - Փամբակի լեռնաշղթա (125 կմ), ամենաբարձր կետը՝ Թեժլեռ (3101 մ)
- 15 - Արեգունու լեռնաշղթա (50 կմ), ամենաբարձր կետը՝ Կարկտասար (2743 մ)
- 18 - Գեղամա լեռնաշղթա (140 կմ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ (3597 մ)

● - լեռնաշղթայի ամենաբարձր կետը

— - նախատեսվող գործունեության վայրերը

Նկար 2. Նախատեսվող գործունեության վայրերի տեղադիրքը ՀՀ լեռնային համակարգում

6.3 Հիդրոերկրաբանություն


Նախատեսվող գործունեության տարածքների հիդրոերկրաբանական կառուցվածքը բնութագրվում է Սևանա լճով: Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 33.2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ակի շրջագիծը մոտ 230 կմ: Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4 -ը՝ Փոքր Սևան, 24 -ը՝ Մեծ Սևան: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային: Սևանա լճից դուրս է գալիս միայն մեկ գետ՝ Հրազդան գետը:

Հրազդանը կամ Չանգուն Արաքս գետի ձախ վտակն է: Սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Երկարությունը 141 կմ է, ջրի ծավալը՝ 2560 կմ² (առանց Սևանա լճի): Արաքս է թափվում ծովի մակերևույթից 820 մ բարձրության վրա: Վերին հոսանքում Հրազդանի հովիտը լայն է, միջին հոսանքում գետը անցնում է նեղ ու խոր (120–150 մ) կիրճով և հերթափոխվում V-աձև ձորերով ու գոգավորություններով: Կան դարավանդներ, սողանքներ, կիրճի ուղղաձիգ լանջերին՝ բազալտային սյունաձև մերկացումներ (Արզնի, Երևան), հովտում՝ Հրազդան, Արզնի բնակավայրերի մոտ՝ աղբյուրներ, որոնք օգտագործվում են Երևանի ջրամատակարարման համար, և հանքային ջրեր («Արզնի», «Բջնի»): Ստորին հոսանքում հովիտն աստիճանաբար լայնանում է և դուրս գալիս Արարատյան դաշտ: Գետի ընդհանուր անկումը մոտ 1100 մ է: Համակարգում կան 340 գետակներ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն, 3-ը՝ մինչև 50 կմ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկածորը, Դալարը, Արայի գետը, Գետառը: Սևումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

6.4 Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ

Հայաստանի տարածքը բնորոշվում է ուժեղ զարգացած սողանքային շարժընթացներով: Հայաստանի տարածքում գոյություն ունեն 2000-ից ավելի խոշոր սողանքներ (մոտ 500 կմ² տարածք), որոնցից շատերը գտնվում են բնակավայրերի սահմաններում: ՀՀ տարածքի սողանքային տեղաշարժերի տեսակները շատ հաճախ տարանցման ընթացքում փոխակերպվում են փլվածք-սահք-հոսք սխեմայով: Ժամանակակից և անցյալի ակտիվությամբ սողանքային շարժընթացների մեծամասնությունը կապված է ակտիվ խզումնային գոտիների հետ, որոնց միջոցով տեղի են ունենում դանդաղ և երկրաշարժածին տեղաշարժեր: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները՝ Մերձքուռյան, Սոմխետա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Չանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վալբի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով են անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աթերայի, Շիրակ-Չանգեզուրի և Միջին Արաքսյան (Երևանյան) բեկվածքները: Բեկվածքների այս զոնաները թափանցում են երկրկեղևի 40-50 մետր խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ: Տարածաշրջանում սեյսմիկ արագացումները տատանվում են 0.3-0.4g սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածաշրջաններում սողանքային գոտիներ չկան: Ստորև **Նկար 3**-ում ներկայացված է Նախատեսվող գործունեության վայրերի սեյսմիկ և սելավային ռիսկերի, ինչպես նաև սողանքային գոտիների առկայությունը:



Նկար 3. Նախատեսվող գործունեության վայրերի սեյսմիկ և սելավային ռիսկերը

6.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանին բնորոշ է մարգագետնասահողային հողային տիպի սևահող տիպիկ, ալրային կարբոնատային ենթատիպը: Մարգագետնասահողային հողային տիպը կազմում է ՀՀ-ի հողային ֆոնդի 0.5%-ը (13000 հա) և տարածված են Սևանում, Կոտայքում, Գորիսում, Ապարանում, Լոռիում և Շիրակում, զբաղեցնում են Հայկական հրաբխային բարձրավանդակի 1300-2400 մ/բարձրությունների թեք սարահարթերը և լեռնալանջերը, ինչպես նաև գետահովիտները: Այս տիպի հողերը առաջանում են չափավոր տաք ու խոնավ կլիմայի, կիսավազվող և լվացվող ջրային ռեժիմի պայմաններում: Չարգանում են հողակալի հիմքերով հարուստ ալյուվիալ-դելյուվիալ և դելյուվիալ կավավազների ու կավերի վրա: Այս ենթատիպի հողերում հումուսի պարունակությունը մեծ է (15% և ավելի), ջրային մզվածքի PH-ը 7-ի սահմաններում է, կատիոնային փոխանակության ունակությունը բարձր, ունեն ծանր մեխանիկական կազմ, բարձր ծակոտկենություն, խոնավունակություն, ունեն լավ արտահայտված կայուն կնձիկային կառուցվածք, հողերի գերակշռող մասն ունի փոքր ծավալային կշիռ:

6.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

